





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵԱՅԲԱԳՈՒՅՆ ՊԱՏԻՐԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՒՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՆՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԳԱՐՈՋԸ Ս. ԷԶՄԻԱՆԵՆԻ ՄԱՅՐ ՏԱՀԱՐՈՒՄ

Հուլիսի 15-ին, Վարդավառի երկրորդ կիրակին, Մայր Աթոռը արտակարգ եռուգեսի մեջ էր: Ուխտավորների և հավատացյալ ժողովրդի խումբն քաղմուրյուն հավաքվել էր Մայր Տաճարի ներսն ու շրջափակը: Շատեր ուխտի էին եկել մոտ ու հեռավոր վայրերից, Վեհափառ Հայրապետի պատարագը լսելու և ունկնդրելու նրա կենդանի խոսքը: Այսօր Մայր Տաճարում մատուցվելու էր հանդիսավոր սուրբ պատարագ: Հավատացյալների բազմությունը Վեհափառ Հայրապետի անցքի վրա անհամբեր սպասում էր ստանալու համար Նորին Ս. Սծուրյան օրհնությունն ու համբուրելու նրա օծյալ Ս. Աշը: Ժողովրդական արտակարգ բազմության պատճառով բավական ծամանակ պետք եղավ Վեհափառ Հայրապետին Կարդիկոսարանից Մայր Տաճար առաջնորդելու համար:

Մայր Տաճարը տոնականորեն զարդարված, արդեն լիքն էր ուխտավորներով և հավատացյալներով: Հանդիսավորությամբ սկսվեց հայրապետական սուրբ պատարագը՝ Մայր Տաճարի Բառանայն երգչախմբի երգեցողությամբ: Հավատացյալները սրտի անսամման բերկրանքով և հոգևոր հափշտակությամբ ունկնդրում էին սուրբ պատարագը և խորին երկյուղածությամբ իրենց շեքմագին աղոթքները միացնում պատարագիչ Վեհափառ Հայրապետի աղոթքներին: Նույն վեհ ու տպավորիչ հանդիսությամբ շարունակվեց սուրբ պատարագը մինչև «Հայր մեր»:

Քարոզի պահն է: Մայր Տաճարում տիրում է Բար լուրյուն: Վեհափառ Հայրապետը դառնում է դեպի ժողովուրդն ու խոսում իր ներշնչված Բարոզներից մեկը, որը լսված է խորունկ ուշադրությամբ, խանդավառությամբ և լավատես հույսերով ու հավատով:

«Էի իմ, Աստուած, ապաւն և տեղի ամուր կեցուցանել զիս, զի հաստատութիւն իմ և ապաւն իմ Դու ես»:



Իրեկի՛ հավատացյալ ժողովուրդ:

Այսօր, երբ կլրանան հինգ տարիները Մեր եպիսկոպոսական ձեռնադրության, Մեր շրթները գոհունակության աղոթք կկարդան առ ամենակալն Աստված, աղերսելով, որ Իր անշափ ողորմությամբ Մեզ ապավեն և հաստատություն հանդիսանա նաև այսօրն, Մեր սուրբ գործի համբուն վրա:

Խոր հուզումով է, որ կհիշեմ այն օրը, 1951-ին, երբ երջանկահիշատակ Գեորգ Զ հանգուցյալ Հայրապետին առջև ծունկի եկան Հայ Եկեղեցվո հինգ վարդապետներ, իրենց գլուխը ունենալով Սրբո Յուսապետական Պատրիարքական տեղապան Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը և բոլորը ուխտեցին անձնուրացությամբ և հավատարմությամբ ծառայելու Ս. Եկեղեցիին, Մայր Աթոռին

և հավատացյալ ժողովրդին: Այդ ուխտը կատարողներեն մին ալ Մենք էինք, իբրև առաջնորդ քեմին հայոց Ռումանիո:

Այսօր, Մեր եպիսկոպոսական ձեռնադրության հինգերորդ տարեկիցին, մեր մեջ չէ, առաջ, մեր մեծագործ Գևորգ Զ Կարողիկոսը և Անոր հայրապետական զավագանի հանձնված է Ռումանիո հայոց քեմի նախկին առաջնորդին:

Աստված գիտե, զիտեն և մարդիկ, քե Մենք շատ հեռու էինք այս Ս. Արքանին մոտենալու մտածումեն, և ամեն բան փորձեցինք, որպեսզի այս ծանր լուծը չիջնե Մեր տկար ուսերուն վրա: Եվ սակայն եկավ պահ մը, երբ ընդդիմառակ և հրաժարիլ համազոր պիտի ըլլար զաստիճանական, և դժժան պիտի ըլլայինք Մեր ուխտը եկեղեցիին ծառայելու: Այսպես է, որ Մեր անձը հանձնեցինք Տիրոջ, կեկենելով մեծ սաղմոսերգութիւն խոսքը՝ «Ահա ընդ ծառայի Բուժ, Տէ՛ր, բառ ողորմութեան Բուժ»:

Երբ կուգեմ, ուսում մըն է այս Մեզ համար, զեպի անձանորք: Քաջ գիտնալով այն բազում դժվարությունները, որ կուեկոծեն մեր Ս. Եկեղեցւոյ կյանքը, հստակորեն կզգայինք, քե ինչպես երկուդին հիւանդներ կսպառնային քափանցել և հետզհետեւ պլլվիլ Մեր մտքին ու հոգիին բոլոր ծայրերուն: Եվ սակայն, ո՛վ գարմանք, շատ ժամանակ շանցած, տեսնեմք, քե անձանորք տակալ կըստապարզի, և կարծես Մեր առջեւն էլ լալող անտեսանելի ուժ մը կրանա «դռները Աստուծո ողորմության»:

Կան մեր կյանքին մեջ պատահանքներ, երևույթներ, որոնք «անիմանալի են ի մեզ և վեր Բան զմեզ»: Մենք կհավատանք աստվածային նախախնամության: «Օհենեալ ես Դու, Տէ՛ր, Աստուծո հարցն մերոց»:

Իրավ է, սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ հայոց, ոչ երազ է և ոչ ալ պատահանք, քե Մեր օրերուն սկսան բացվիլ՝ ողորմության դռները ի շինություն Ս. Եկեղեցւոյ և ի պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Այս Ս. Տանարք հիմնող, Ենք Միաձինք, Տէր և Փրկիչը, լսած է մեր բոլորիս աղոթքները և իր փրկարար Աջը երկարած է մեզի. և Ան պիտի հոգով, պիտի առաջնորդե զմեզ: «Ի Քեզ, Տէ՛ր, յուսացայ, մի՛ ամաչեցից յափտեան»:

Մեր օրերուն կապաժառակերպվի մեր Ս. Եկեղեցին: Հավատքը կվերածնի, հոգիները կմանկանան, Քրիստոսի Ս. Ավետարանը նոր շերտերով և Բաղդարայումը կլցնել բոլոր զատարակ սրտերը: Լո՛յս, պայծառ լո՛յս կիջնե Հայաստանայոց վրա «մերոյ յուսատուրութեան վերակացու» մեծ Լուսավորչի անմար կանթեղեն:

Երանի՛ քե կարենայինք նիշտ հասկնալ ու տեսնել այդ իմանալի լույսը, որ սկսած է ցարիլ, և մենք մեր ձեռներով լայն բանայինք մեր հոգիներու յուսամուտները, ավելի շուտ և ավելի լիությամբ ընդունելու համար գայն:

Մեր լավատեսությունը, Մեր համոզումը, քե կապաժառակերպվի Ս. Եկեղեցին՝ կրթի նախ Մեր ներքին ապրումեն ու կենսմովի այն հավատքի զգացումին վրա, որ առաքելական դարը հիշեցնող քափով և շերտերով սկսած է բորբոքել մեր ժողովրդի լայն զանգվածներու հոգիները:

Ապա Մենք յատակորեն կտեսնենք նշմարությունը այն սրբազան սիրտ և հավատարմության, որով առգործված է մեր Ազգը քե՛ այստեղ, քե՛ Սփյուռքի մեջ, զեպի իր սուրբ հավատքի կեդրոն՝ անշեշ Լուսո Խորան Ս. Էջմիածինը:

Այստեղ հայտնված է Աստված մեր ժողովրդին, և այստեղ է լսված խոսքը:

Այստեղեն կսկսի մեզ համար «նախապահք, նշմարությունը և կյանք» հոգիներու:

Միաձինք մեզ կրաշխվի Էջմիածնով:

Երբորդ՝ մեզ մեծապես կոզեշնչե նյութական շինարարական աշխատանքներու այն ընդարձակ ծրագիրը, զոր կազմած ենք և սկսած ենք կյանքի կոչել: Ինչպես կտեսնենք, տասը օրե ի վեր սկսած են արդեն աշխատանքները Մայր Տանարքի մարմարապատման:

Մենք հուսով ենք, քե առաջիկա հինգ տարիներու ընթացքին պիտի կարողանանք վերանորոգել և շենցնել մեր մայրենի բոլոր հոգակավոր բազմադարյան սրբավայրերը՝ Հոփսիսնեն, Գայանեն, Շողակարը, Օշականը, Խոր-Վի-

բապր, Գեղարդը, Բջինն, Գանձասարը և ուրիշներ: Հիմնովին պիտի վերանորոգվին նաև Ս. էջմիածինը և իր շուրջ գտնվող բոլոր շենքերը: Ինչպես գիտեմք, Միությունեական կառավարության Վարչապետ Բուլգանինի հատուկ կարգադրությամբ Մայր Աթոռին կվերադարձվին էջմիածնի նոդամասի վրա գտնվող և ցարդ չհանձնված բոլոր շինությունները, մեջն ըլլալով նոր վեհարանը, երկհարկանի, հայկական ոճով մեծ շինությունը (20 սրահներ բաղկացած), կառուցված 1912—1914 թվականներին:

Հունիս 28-ին Մեր նախագահությամբ տեղի ունեցավ առաջին խորհրդակցական հանդիպումը մասնագետներու, կազմելու համար ընդհանուր ծրագիր և նախագիծ՝ Ս. էջմիածնի հոդամասի վրա կատարվելիք վերանորոգություններու և ընդհանուր բարեկարգումի: Այդ ժողովին մասնակցեցան մեր երկրի անվանի տասներկու ճարտարագետներ, հնագետներ և շինարարներ: Ժողովին ներկա եղան նաև Հայ եկեղեցվո գործերու խորհրդի նախագահ պ. Հրաչյա Գրիգորյան, ճարտարապետության կոմիտեի նախագահ պ. Ռուբեն Ազիզբեկյան և էջմիածնի քաղաքային խորհրդի նախագահ պ. Հովհաննիսյան: Այս լայն խորհրդակցական ժողովեն հետո կազմվեցավ հատուկ հանձնաժողով, որ, ի նկատի ունենալով հայտնված բոլոր տեսակետները, կկազմն վերջնական ընդհանուր նախագիծը Ս. էջմիածնի վերաշինության և բարեկարգման աշխատանքներին: Այդ հանձնախմբի անդամներն են ճարտարապետ Միխայիլ Մազմանյան, ճարտարապետ Ռաֆֆի Իսրայելյան, հնագետ դոկտ. Կարո Ղաֆադարյան, ճարտարապետ Վարազդատ Հարությունյան, ճարտարապետ Կոստանդին Հովհաննիսյան:

Վերին աստիճանի մխիթարական է Մեզ տեսնել, թե ինչպիսի նախանձախնդրությամբ և եռանդով մեր պետական իշխանությունն ու մեր մասնագետները իրենց լայն աջակցությունը կբերեն մեր սուրբ գործի հաջողության համար: «Ուրախ լե՛ր, Սուրբ եկեղեցի»:

Չորրորդ՝ այստեղ մեր հոգիները կհրեմվին հաստատելով, որ շնորհիվ Վարչապետ Բուլգանինի, և մեր հայրենամեր կառավարության բարյացակամությամբ ձեռք բերված արտոնություններուն, Մայր Աթոռ Ս. էջմիածինը հետզհետե կաշխուժանա և քայլ առ քայլ կկազմակերպվի եկեղեցին, թե՛ Հայաստանի և թե՛ դրացի եղբայրական հանրապետություններուն մեջ:

Մանր թե՛ Ձեզ, թե վերջին տարիներու ընթացքին արդեն բավարար չափով կազմակերպված են մեր ներքին քեմերը իրենց առաջնորդներով, քեմական և եկեղեցական խորհուրդներով: Այսպես, բացի Հայաստանի քեմերեն, ունինք երեք քեմական կեդրոններ՝ Թբիլիսին՝ Վրաստանի հայ եկեղեցիներու համար, Բաֆուն՝ Ադրբեջանի և Թուրքեստանի հայ եկեղեցիներու համար և Թուստուք՝ Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի հայ եկեղեցիներու համար:

Մեծ ուշադրությամբ ի վիճակի ենք ավետելու Ձեզ, թե մինչև սկստեմքերի վերջը պիտի վերաբացվին 10—15 նոր եկեղեցիներ Հայաստանի մեջ, իսկ մինչև այս տարվան վերջը քանի մը տասնյակ հայ եկեղեցիներ և շուրջ վանքեր ևս իրենց սուրբ դռները պիտի բանան հավատադրյալներու առջև՝ Վրաստանի, Ադրբեջանի, Ղարաբաղի, Նախիջևանի և Անդրկասպյան երկիրներու մեջ: Տեղյակ ենք նաև այն մասին, որ դրացի հանրապետություններու հայաքան շրջաններուն մեջ պիտի վերաբացվին բազմաթիվ հայկական վարժարաններ:

Եվ վերջապես մխիթարական է տեսնել, թե Մայր Աթոռի մեջ կպատրաստվի և կանի հոգևորականներու նոր սերունդ մը. որուն շարքերը հետզհետե կխլան տանան գիտակից և շնորհալի երիտասարդներով՝ արեղաներ և սարկավագներ, որոնք մոտ ապագային պիտի կոչվին ղեկավար դեր ստանձնելու, գորացնելու և շենցնելու համար մեր հազարամյա Ս. եկեղեցին: Մեր Հոգևոր ձեմարանը ևս զարգացման ճանապարհին վրա կգտնվի: Հառաչիկա տարիշրջանին ծրագրած ենք 25—30 նոր ուսանողներ ընդունիլ հիմներուն վրա, իսկ երկու տարի վերջ կհուսանք, որ Մայր Աթոռի հոգևոր կրթության այս հաստատությունը պիտի ունենա շուրջ հարյուր ուսանող, բաժնված վեց դասարաններու վրա:

Հույժ փափագելի է մեզ ուսանողներ ընդունիլ նաև արտասահմանեն:

Արդ, քանի որ այս է նշմարիտ կացությունը այսօր, և ասոնք են լուսավոր հեռանկարները, որ կբացվին մեր եկեղեցվո և Մայր Աթոռին առջև, իրավունք

և պարտականություն չունի՝ նախ քան թե Մեր լավատեսություններն, Մեր ոգևորություններն և ուրախություններն բաժին հանելու մեր հավատացյալներուն, ի մասնավոր ի մեր Սփյուռքի ժողովուրդին, որ քաջ գիտենա Մենք, թե հավատով և հույսով զեղուն, շատոնց ի վեր կապասեր այս օրերուն: Եվ մեր ժողովուրդը իր բնագոյով չէր սխալած: Ինչքան նշանակելի է և սրտառու, որ, թե՛ արտասահմանյան Մեր այցելությանց առթիվ, թե՛ վերադարձին՝ Մոսկվա և Լենինականի կայարանը, թե՛ Նրևան և թե՛ Էջմիածին Մեր շուրջը շատ հաճախ կլսեինք նույն մաղթանքը հայ հավատացյալներու բերենք. «Փա՛ռք Քեզ, Աստված, փա՛ռք Քեզ, այս օրերն ալ տեսանք»:

Իրավամբ՝

«Նկեղեցի Հայկական...»

Քու երգը է միշտ հաղթությունը:

Այս բոլորն ենառ, սակայն, չենք կրնար շտեմել նաև այն ստվերը, որ կապառնա իջնել Մեր համապարհին վրա: Կակեարկենք մեր Ս. Նկեղեցվո նվիրապետական երկրորդ Արքու եկատվող՝ Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ծոցին մեջ ստեղծված կացության: Թեև մասնավոր Արքու մըն է ան, որոշ ավանդություններով, և ինչ որ ալ պատանի այնտեղ, չի կրնար էական ազդեցություն մը ունենալ Հայ Նկեղեցվո բնդհանուր հառաչքներացին վրա, սակայն Մեր իղձը պիտի բլլար, որ ան դուրս չմնար, իր խել գոյության և հեղինակության համար, մեր Նկեղեցվո վերադարձումի բնդհանուր նիզեն և շինարար աշխատանքներեն: Ս. Նկեղեցին իբրև մեկ մարմին, ինչքան ամբողջ և անխռով մնա ի Քրիստոս սիրո միության մեջ, այնքան ավելի կենսունակ կդառնա թե՛ ինքը ամբողջը, թե՛ այդ ամբողջին մասերը, Նկեղեցվո սուրբ մարմինը իր բոլոր անդամներով:

Մեր նպատակը չէ եղած և չէ՝ միջամուխ բլլալ Կիլիկիո Արքուն ներքին վեճերուն. Մեր նպատակը եղած է և է այսօր ալ՝ օգնել երե հեճար է, որպեսզի Անրիկիսար վերագտնեն իր անկախությունը, ներքին խաղաղությունը և շինարար կյանքի ուղին, մեր Ս. Նկեղեցվո ծոցին մեջ:

Ահա թե ինչու մտատանջված և բնդառաջելով Զարեն Եպիսկոպոսի կրկնակի խնդրանքներուն կատարված նգիշեն արևելակոպոսի միջոցով և Մեզի հաղորդված՝ առաջինը Փարիզ 6 ապրիլ րվակիր համակով և երկրորդը Էջմիածին 4 և 6 հունիս րվակիր հեռագրերով, փորձեցինք հաշտության նոր համար մը որոնել և Ս. Էջմիածին հրավիրեցինք Կիլիկիո Արքու Եպիսկոպոսները և կողմերու աշխարհական ներկայացուցիչները առանց խտրության, առաջարկ բերելով, որ օծումն ալ այստեղ Միածնա՛յ Մայր Տանարին մեջ կատարվի, առանց որ պարտադիր նախընթաց մը նկատվի այդ ապագայի համար: Կամեցանք ադիրը ստեղծել Մայր Արքուն մեջ համաձայնություն մը գոյացնելու և համերաշխություն հաստատելու Հայ Նկեղեցվո ծոցին մեջ: Եվ, ինչո՞ւ չէ, խորհեցանք նաև, առաջին անգամ բլլալով մեր ազգային կյանքի վերջին 35 տարիներու բնդացին, որ այստեղ գոյացած համաձայնությունը բերես բարեբար անդրադարձում մը կրնար ունենալ նաև մեր ազգային-հասարակական կյանքի վրա, Եկեղեցական կյանքի սահմաններեն ալ անդին. և ի՞նչ, միթե զե՞ր կրլլար:

Մեր առաջին՝ 9 հունիս րվակիր հեռագրին մերժողական պատասխան ստանալով, բայց միշտ առաջնորդված խաղաղության և միության նույն ոգիով, հունիս 22-ին երկրորդ հեռագրով մը կրկնեցինք Մեր հրավերը, հարգելով գերաշնորհ Տեղապան Խորեն Եպիսկոպոսի առաջարկը, որ օծումը կատարվի Անրիկիսի Տանարին մեջ, համաձայնությունը Էջմիածին կայացնելն հետո: Այս երկրորդ հեռագիրը կվերջացնեինք կոչ բնելով, որ չմերժվի Եղբայրական սիրո հրավերը, որ կուգար Մայր Արքու Ս. Էջմիածնեն:

Մեր այս երկրորդ հրավերին պատասխանը ցայսօր, 15 հուլիս, չենք ստացած: Ինչպե՞ս: Ուրեմն, պարզ պատասխա՛ն մըն ալ կզլացուի: «Յո՛ւ երբաս», Անրիկիսա: Մի՛թե սերը և հարգանքը դեպի մեր սուրբ հավատքի կեդրոնը այդ աստիճան ցամքած է ումանց սրտերուն մեջ և ուժացումը այնքա՛ն խորացած Սփյուռքի կյանքի պայմաններուն մեջ:

Ի՞նչ պատասխան պիտի տաք, վա՛ղր. Ձեր որդիներուն:

Ձե՛նք մտածե՛ր տխուր մեկնություններու հանգիլ, չե՛նք փորձվիր Մեր լա-
կանեա՛ր քաղաքի տալ և լո՛ւ: Հետգնեա՛ն պարզ կերևա, որ դժբախտաբար,
եկեղեցական կյանքի և եկեղեցվո շահերուն հետ աղերս չունեցող ձգտումներ
պատճառ կոտորան, որ Անթիլիասը ինքզինքը Մաւր Արոսնե՛ն անջատե՛, հա-
կառակ իր միաբանության և հուսադատ ժողովրդի կամփին:

Քաղաքա՛նեան ղեկավարներու կողմէ վերջերս հրապարակուած երկար հոդ-
վածաշարքեր և այլ երևույթներ հստակ կերպով ցույց կուտան, թե բաժանա-
րաբեր որքերգական սխալ մոն է, որ կփորձեն կատարել, Կիլիկիո Արոսը
իրենց քաղաքական պայքարի հեղաշարժ դարձնել ուղեւոր: Մենք կհորդորենք
գիրենք հեռու կենալ նման ծրագրէ և ազատ ձգել Անթիլիասը և Ջարեն Եպիս-
կոպոսի ձեռքերը: «Ի բաց կազէք ամենեքեան»: Եւ երբ անոնք ամեն գնով պիտի
ուզեն բաժանել մեր եկեղեցին, Մենք կխորհիմք, թե Խորեն, Ջարեն և Ղևոնդ
Եպիսկոպոսները պետք է վճռական քայլ մը առնեն և միանան այն ոգիին, որ
մեր ամբողջ եկեղեցիին ոգին է, մեջը ըլլալով նաև Տանն Կիլիկիո միաբանու-
թյան մեծամասնությունը:

Ինչքան ուշ չէ տակալին, քող հասկնան իրական կացությունը, ապա թե
ոչ հեռու չէ այն օրը, երբ Մենք ևս պիտի չկարողանանք գիրենք փրկել:

Ոչ ոք ոչինչ կշահի ինքզինքը Ս. Էջմիածնին հակադրելով: Ո՛չ մեկ ուժ այս
ժողովրդի հոգիին չի կրնար պոկել Ս. Էջմիածինը: Մեր կյանքի մեծ նշմար-
տություններէն մեկն է այս, որ լավ եհասկցվի այսօր Հայրենիքէն ներս. երբ
դուրսը չհասկցողներ կան տակալին, Մենք կաղորդենք, որ Աստված անոնց ալ
շնորհէ տա: Մենք տարակույս չունենք, թե մեր ամբողջ հոգևորականությունը
և մեր ամբողջ հավատացյալ ժողովուրդը մեկ սիրտ, մեկ հոգի, այս սկզբուն-
քին վրա կանգնած պիտի մնան:

Ի սփյուռս աշխարհի ցրված Մեր զավակները, մեր ժողովրդի զավակնե-
րը, բոլորը անխտիր պետք է միանան և ամեն գնով ապահովեն՝

1. Հայաստանյայց եկեղեցվո միությունն ու անբաժանելիությունը.
2. Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Արքային անկախությունը ամեն տե-
սակի քաղաքական ազդեցություններէ և անոր ինքնավարությունը՝ ավանդա-
կան իր իրավասություններով.

3. Պահպանումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Անթիլիասի Աթոռի միջև սիրո
և հոգևոր գործակցության ոգիին և իրավասությանց սահմաններուն:

Այս կպահանջէ մեզմէ մեր Ս. եկեղեցին, հոգևոր վերաշինության և վե-
րակազմության այս շրջանին մանավանդ, այնպէս, ինչպէս ճիշտ կերպով
բանաձևվեցա՛վ Եպիսկոպոսական ժողովի կողմէ, Անթիլիասին առաջարկված
համաձայնագրով:


Այս է Մեր հավատքը, և վառ է Մեր ՀՈՒՅՈՒՆ, թե ի վերջո բոլորը պիտի
հասկնան Մեզ, և խաղաղության ձայնը պիտի հնչէ: «Եւ արդ, զի ունիմք այս-
պիսի յոյս, բազում համարձակութեամբ վարեցում» (Թ Կորնթ., Գ 12):

Այսօր, հայ հավատացյալ և հուսացեալ ժողովուրդը, թե՛ Հայրենիքէն ներս,
թե՛ Հայրենիքէն դուրս, հոգևոր կյանքի նոր հեղաշարժ մը կորոնեն, հրաշքներու
կհավատա, տեսիլներ կտեսնեն և սուրբեր կփնտրեն, և անապատներէն ղեպի
եկեղեցի, ղեպի կենաց աղբյուրը կվազեն, ձեռքերը ղեպի Մեզի կարկառած, ու
կսպասեն Մեր խոսքին, կսպասեն Մեր գործին: Մեր ժողովուրդը գԱստված
կփնտրէ:

Երկինքը պիտի բարկանար մեր վրա, երբ չգիտնայինք մեր պարտքը կա-
տարել, երբ ի վրեժակի չըլլայինք, մենք հոգևորականներս, անցողական և աշ-
խարհիկ երևույթներէն անդին տեսնելու, բարձրանալու և բարձրագոյնում հա-
մար մեր հավատացյալ ժողովուրդը, մեր եկեղեցին, հավիտենական նշմարտու-
թյուններու և իրողություններու մակարդակին վրայ: Մենք կոչված ենք ծառա-
յելով իշխելու, և առաջնորդելու մեր ժողովուրդը ղեպի պայծառակերպումը իր
անհատական ու հավաքական կյանքին:

Բայց մենք պիտի չտկարանանք մեր առաքելութեան մեջ:

Մենք և մեր ամբողջ Եպիսկոպոսական դասը հավատարիմ պիտի մնանք
Ս. Հոգվո ներգործությամբ ստեղծված միության և անբաժանելիության ոգիին,



գոր հոշակեցիւնք բոլորս միասիրտ և միախորհուրդ, մեր վերջին նպիսկոպոսական ժողովի մեջ, և անխախտ պիտի մնանք բոլորս այդ վեմին վրա՝ աստվածահաճո համարձակութեամբ և եկեղեցաշէն վեճականութեամբ:

Եվ մենք պիտի զորացնենք ու ծաղկեցնենք մեր Ս. Եկեղեցին: Կրավե ինչքան տառապեցա՞վ ան, կրավե ինչքան բզկտվեցա՞վ և եվաստացվեցա՞վ:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, միշտ հաղորդ Իրիւթոնեութեան պանծալի ամբողջութեան մին աշխարհի վրա, և հայ ժողովրդի կյանքի իմաստը փառավոր կերպով զարդարողը այսօր է՝ և հետզհետեւ առավել ստուգութեամբ վերադառնալի պիտի դառնա մեր սուրբ հավատքի բերդը, ուժը և դեկավարն իր կյանքին և իր սուրբ կոչումին, առանց անկոչ խնամակալներու:

Հայ հոգևոր եղբայրներ՝ և սպասաւորներ՝ սուրբ սեղաններու, և դո՛ւն, հայ հաւատացեալ ժողովուրդ, ձեր ձեռքին մեջ առե՛ք զեկր մեր բազմաշարժար Ս. Եկեղեցիին և ամուր պանեցե՛ք զայն հավատքով, եռանդով և փառքով հպարտութեամբ:

Ո՛վ դուն, արքա՛ն Գրիգոր, Ս. Լուսավորի՛չ մեր, կլսե՛ս արդո՞ք մեր ձայնը՝ քո բարձունքներեղ...

Մենք բոլորս, հավատարիմ քո և մեր ուխտին, պիտի ուրախացնենք մեր Ս. Եկեղեցին, պիտի ուրախացնենք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, պիտի ուրախացնենք և պիտի լուսավորենք մեր հավատացեալ, մեր սիրեցեալ, մեր պատվական հայ ժողովուրդը:

Զի «Կենդանի է Տէր և օրհնեալ է Աստուած»:

«Քաղաւոր երկնաւոր, զեկեղեցի Քո անշարժ պանեա՛, և զերկրպագոս անուանող Քում պանեա՛ ի խաղաղութեան»:

Նորին Սուրբ Օմութեան Վեհափառ Հայրապետի հոգեշունչ այս փառքը ձայնափռվեց Երևանի ռադիոկայանից հաշորդ կիրակի՝ հուլիսի 22-ի զիշերային ռադիոհաղորդումների ընթացքում:

